**Արձանագրություն N 3**

**ԿՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-21/06 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բանակցությունների վարման և գնահատման արդյունքների հաստատման նիստը (09.08.2021թվականի N 2 արձանագրության շարունակություն)**

*գ. Քասախ*

*16. օգոստոսի 2021թ*
*ժամը 12:00*

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սիմոնյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Խաչատրյան, Ս. Ավետիսյան, Ժ. Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանը

**Գնային առաջարկների վերաբերյալ բանակցությունների վարման մասին**

**(Գ. Սիմոնյան)**[6]

1.1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գների իջեցման շուրջ բանակցությունների վարման նիստին էին ներկայացել **«ԲՈԼՈՐԱԿ» ՍՊԸ, «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ-ների տնօրենները և «Էն Շին» ՍՊԸ** -ի ներկայացուցիչ Արմեն Մարտիրոսյանը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**

***1. Մասնակիցների կողմից բանակցային արդյունքում ձևավորված վերջնական գնային առաջարկները.***

**(Գ. Սիմոնյան)**[7]

| N | Չափաբաժնի համարը և գնման ենթակա ապրանքների անվանումները/ կազմակերպության անվանումը | *«Քասախ համայնքի Վ. Տերյան, Վ. Տերյան 5-րդ փողոց 2-րդ հատված և Ուռենիներ փողոցների կապիտալ ասֆալտապատման աշխատանքների կատարման» աշխատանքների կատարում»* | | | *Նախահաշվային գինը* |
|---|---|---|---|---|---|
| | ԱՆՎԱՆՈՒՄԸ | *Գնային առաջարկը ներկայացված է առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)* | *ԱԱՀ (ՀՀ դրամ)* | *Գնային առաջարկի ընդհանուր արժեքը ներառյալ ԱԱՀ-ը (ՀՀ դրամ)* | *ներառյալ ԱԱՀ-ը (ՀՀ դրամ)* |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1 | «ԲՈԼՈՐԱԿ» ՍՊԸ | 51.583.333,33 (հիսունմեկ միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա) | 10.316.666,67 (տաս միլիոն երեք հարյուր տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ վաթսունյոթ լումա) | 61.900.000 (վաթսունմեկ միլիոն ինը հարյուր հազար) | 65.455.900 (վաթսունհինգ միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար ինը հարյուր) |
| 2 | «ԱՐՀՈՎՇԻՆ» ՍՊԸ | 51.666.666,67 (հիսունմեկ միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ, վաթսունյոթ լումա) | 10.333.333,33(տաս միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք դրամ երեսուներեք լումա) | 62.000.000 (վաթսուներկու միլիոն) | |

[6] *Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը*
[7] *Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | «Էն Շին» ՍՊԸ | 52.908.333,33 (հիսուներկու միլիոն ինը հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ, երեսուներեք լումա) | 10.581.666,67 (տաս միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր վաթսունվեց դրամ, վաթսունյոթ լումա) | 63.490.000 (վաթսուներեք միլիոն չորս հարյուր իննսուն հազար դրամ) | |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:**[8]

***3. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ***

(Գ.Սիմոնյան)[9]

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 6-րդ մասով հանձնաժողովը որոշեց՝ հաստատել բանակցային ընթացակարգի արդյունքները, առաջին տեղ զբաղեցրած մասնակից «**ԲՈԼՈՐԱԿ**» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից՝ ընդհանուր 61.900.000 (վաթսունմեկ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ արժողությամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:***

***4. Անգործության ժամկետ սահմանելու մասին***

(Գ.Սիմոնյան)[10]

*4.1 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին* **հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից** *5-րդ օրացուցային օրը ներառյալ:*

Ծանուցել կազմակերպության տնօրենին հրավերի 1-ին մասի 10-րդ կետերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները:

*Մասնակցի կողմից պայմանագրի կատարման ապահովումն է պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:*

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

***5. Հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրելու մասին***

(Գ.Սիմոնյան)[11]

5.1 Հանձնաժողովը որոշեց սույն ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել անգործության ժամկետի ավարտի և գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:00-ին, գ. Քասախ Ս. Ջալալյան հրապարակ 1 հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:***[12]

նախագահ — Գ. Սիմոնյան

անդամներ — Ժ. Գրիգորյան

Ռ. Խաչատրյան

Ս. Ավետիսյան

քարտուղար — Ա. Հովհաննիսյան

---

*[8] Ըստ 13-րդ կետի*

*[9] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը*

*[10] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը*

*[11] Նշել գնահատող հանձնաժողովի նախագահի անունը*

*[12] Ըստ 13-րդ կետի*